# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՐՏԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿԻ ԱՁ-ն ՀՀ ԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/09 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 12 | Home Rest | Home Rest | Berta | Արտակ Կարապետյան Հայկի ԱՁ | "Գույները և չափերը՝ ՀՀ Առողջապահության նախարարի 12.02.2024թ. N 50-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, պետք է լինի լավ հղկված, ողորկ, առանց ծլեպների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները պետք է լինեն կլորացված կամ անկյուններին ամրացվեն պոլիմերային կամ ռետինե՝ անվտանգությունն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ապահովող հատուկ դետալներ։ Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում։ Պետք է ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը և/կամ նկարազարդումը պետք է կատարվի որակյալ, հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների։ Պետք է ապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը պետք է լինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով, ցանկալի է նաև լինի կարգավորման հնարավորությամբ և հարմարավետ՝ շահագործման ժամանակ։ Մետաղական կմախքով մանկական սեղանի չափսերն են՝ 1000 x 700 x 480 մմ (Ե x Լx Բ)։Սեղանի աշխատանքային հարթության համար պետք է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | օգտագործվի լամինացված ՄԴՖ՝ 18 մմ հաստությամբ: Լամինացված ՄԴՖ-ի աշխատանքային հարթության եզրերը պետք է լիննեն հղկված, մշակված և ողորկ, շրջափակվեն 1-2 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC կամ համարժեք): Բոլոր անկյունները պետք է կլորացվեն, կամանկյուններին ամրացվեն պոլիմերային կամ ռետինե կլորացված հատուկ դետալներ: Սեղանի կմախքը պատրաստված է 25 x 25 x 2.0 մմ չափսի մետաղական քառանկյուն խողովակներից, կմախքի արտաքին չափերը՝ 800 x 600 x 431 մմ (Ե x L x Բ), որին զոդման միջոցով ամրացվում են 20 x 20 x 2.0 մմ տրամաչափի քառանկյուն խողովակից 4 մետաղական ոտքերը, որոնք էլ զոդման եղանակով շրջանաձև կապով միացվում են իրար հետ 15 x 15 x 2.0 մմ տրամաչափի քառանկյուն խողովակով: Ոտքերը պետք է խցանված լինեն պլաստիկե խցաններով՝ 6 մմ հաստությամբ: Զոդման կարանները պետք է լինեն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մշակված, ողորկ, մետաղը փոշեներկվում է բարձրակարգ ներկանյութով: Նմուշները պետք է մինչ մատակարարում համաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Պետք է սահմանվի երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով: Ապրանքի վրա պետք է կատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը պետք է կատարվի հայերեն, թույլատրվում է նաև միջազգային լեզվով (մասնավորապես՝ անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում): " |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ԿԱՐԵՆ ԳԻՆՈՍՅԱՆ ՌԱՖԻԿԻ ԱՁ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/09 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 12 | | | | | |
| | | | | | |